ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 983

*27 նոյեմբեր 2023թ.*

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Քննարկվող հարցերի անհրաժեշտությունից ելնելով՝ 2023 թվականի դեկտեմբերի 01-ին, ժամը 10:00-ին, Ծաղկաձոր համայնքի ղեկավարի նստավայրում հրավիրել Ծաղկաձոր համայնքի ավագանու արտահերթ նիստ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 984

*28 նոյեմբեր 2023թ.*

<<ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՂՐԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ԵՎ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԻՖԻԿԱՑԻԱՅԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի՝

# ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հաստատել <<Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> և <<Ծաղկաձոր քաղաքի մանկական արվեստի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2023-2024 ուսումնական տարվա տարիֆիկացիայի ցուցակները՝ համաձայն հավելված 1, 2:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Դասատուների տարիֆիկացիայի ամսական ֆոնդը կազմում է 1115767 ՀՀ դրամ

Պարենի տնօրեն՝ ․․․ Ա.Թադևոսյան

22.11.2023թ.

Հաստատում եմ՝
Ծաղկաձորի համայնքի ղեկավար
Ն.Հովհաննիսյան

# <<ԾԱՂԿԱՁՈՐԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ >> ՀՈԱԿ

## ԴԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՏԱՐԻՖԻԿԱՑԻԱՅԻ ՑՈՒՑԱԿ

| N | Ազգանուն,անուն | Պաշտոն | Մասնագիտ. | Կրթություն | Ստաժ | Առարկա | Դրույքի չափ | Առարկաները ըստ ժամերի | | | | | | | | 2- րդ գործիք | Կոնց.և իլյուստ. | Ընդ.ժամ | Ընդ.աշխատավարձ | Տարեկան աշխատավարձ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | Մասնագիտական | Սոլֆեջո | Գրակ. | Անսամբլ | Խոր | Ընդհ.դաշնամուր | Վոկալ | Դիզայն | | | | | |
| 1 | Սարգսյան Հասմիկ | դաս. | երաժշտագետ | բարձրագ. | 47 | սոլֆեջո | 119000 | | 6,5 | | | | | | | | | 6.5 | 32227 | 386724 |
| 2 | Սողոմոնյան Աննա | դաս. | դաշնակահար | մ/մաս. | 30 | դաշնամուր | 119000 | 16 | | | 6 | | 2 | | | | 5 | 29 | 143782 | 1725384 |
| 3 | Անտոնյան Ռուզաննա | դաս. | խմբավար | մ/մաս. | 39 | սոլֆ/գրակ | 119000 | | 4,5 | 3 | | | | | | | | 7,5 | 37185 | 446220 |
| 4 | Ղազեսյան Մանե | դաս. | երգչուհի | բարձրագ. | 15 | վոկալ | 119000 | 9,5 | | | | | | | | | | 9,5 | 47101 | 565212 |
| 5 | Մեսրոպյան Արմենուհի | դաս. | երգչուհի | բարձրագ. | 18 | վոկալ | 119000 | 9 | | | 2 | | 2 | | | | | 13 | 64454 | 773448 |
| 6 | Իսրաելյան Հայկազ | դաս. | ազգ.փող. նվագ | մ/մաս. | 10 | շվի դուդուկ | 119000 | 8 | | | 4 | | | | | | | 12 | 59496 | 713952 |
| 7 | Զալիբեկյան Աննա | դաս. | դիզայներ | մ/մաս. | 23 | դիզայն | 119000 | | | | | | | | 12 | | | 12 | 59496 | 713952 |
| | | | | | | | | գծանկար | մակրամե | գունանկար | քանդակ | կոմպոզիցիա | նկարչություն | կիրառական արվեստ | ծեփագործություն | | | | | |
| 8 | Թադևոսյան Աննա | դաս. | նկարչուհի | բարձրագ. | 30 | կերպարվեստ | 119000 | 3 | | 3 | 2 | 3 | 2 | 2 | 2 | | | 17 | 84286 | 1011432 |
| | | | | | | | | դաս.պար | հայկ.պար | ժմն. պար | ժող պար | ռիթմիկա | մարմնամարզություն | պատմ. պար | | | | | | |
| 9 | Պողոսյան Արփինե | դաս. | պարուսույց | մ/մաս. | 12 | պար | 119000 | 7 | 5 | 4 | 4 | 8 | 2 | | | | | 30 | 148740 | 1784880 |
| | գործատուի միջոցների հաշվին փոխանցվող դրոշմանիշային վճար | | | | | | | | | | | | | | | | | | 10500 | 21000 |
| | **Վարչատնտեսական աշխատողներ** | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1 | Թադևոսյան Աննա | | տնօրեն ժ/պ | | | | 131000 | | | | | | | | | | | | 131000 | 1572000 |
| 2 | Հովհաննիսյան Սրբուհի | | հաշվապահ | | | | 119000 | | | | | | | | | | | | 119000 | 1428000 |
| 3 | Մանասյան Ռոզա | | հավաքարար | | | | 119000 | | | | | | | | | | | | 119000 | 1428000 |
| 4 | Բաղդալյան Կարեն | | տնտեսվար | | | | 59500 | | | | | | | | | | | | 59500 | 714000 |
| | | | | | | | | | | | | | | | | | | | 1115767 | 13284204 |

Համայնքի ղեկավար_________________Ն.Հարությունյան

Դասատուների տարիֆիկացիայի ամսական
ֆոնդը կազմում է **1795000** ՀՀ դրամ

Տնօրեն _________________Գ.Գոգոյան

16 նոյեմբեր 2023թ.

**«ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀՈԱԿ**
**ԽՄԲԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՏԱՐԻՖԻԿԱՑԻԱՅԻ ՑՈՒՑԱԿ**

| N | Ազգանուն , անուն, | Պաշտոն | Մասնագիտություն | Կրթությունը | Ստաժ | Ինչ առարկա է դասավանդում | Դրույքի չափը | Առարկաները ըստ ժամերի | | | | | | | Ընդ. ժամ | Ընդ. աշխատա-վարձ | Տարեկան աշխատա-վարձ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Աղասյան Կարեն | մարզիչ | մարզիչ | բարձ | 7 | ձյուդո | 115000 | 36 | | | | | | | 36 | 115000 | 1380000 |
| 2 | Կնյազյան Արթուր | մարզիչ | մարզիչ | բարձ | 4 | թաեքվանդո | 115000 | | 36 | | | | | | 36 | 115000 | 1380000 |
| 3 | Հայրապետյան Նարեկ | խմբակավար | գործ.կատարողականությ | մ/մաս. | 2 | դուդուկ | 115000 | | | 36 | | | | | 36 | 115000 | 1380000 |
| 4 | Թարխանյան Ռուստամ | խմբակավար | գործ.կատարողականությ | մ/մաս. | 11 | դհոլ | 115000 | | | | 36 | | | | 36 | 115000 | 1380000 |
| 5 | Հակոբյան Ցոլիկ | խմբակավար | մոդելավորող,նախագծող | մ/մաս. | 5 | ասեղնագոր. | 115000 | | | | | 36 | | | 36 | 115000 | 1380000 |
| 6 | Բայրամյան Արթուր | խմբակավար | պարուսույց | բարձ | 11 | պար | 115000 | | | | | | 36 | | 36 | 115000 | 1380000 |
| 7 | Գասպարյան Հերմինե | խմբակավար | պարուսույց | բարձ | 2 | պար | 115000 | | | | | | 36 | | 36 | 115000 | 1380000 |
| 8 | Հարությունյան Սյուզաննա | խմբակավար | պարուսույց | բարձ | 1 | պար | 115000 | | | | | | 36 | | 36 | 115000 | 1380000 |
| 9 | Մխիթարյան Անի | խմբակավար | կիրառական արվեստ | բարձ | 1 | նկարչությ. | 115000 | | | | | | | 18 | 18 | 57500 | 690000 |
| | Վարչատնտեսական աշխատողներ | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | դրույ.միավ. | | | | | | | | | | | |
| 1 | Գոգոյան Գոհար | տնօրեն | | | | 1 | 185000 | | | | | | | | | 185000 | 2220000 |
| 2 | Հովհաննիսյան Դիանա | գեղմասվար | | | | 1 | 120000 | | | | | | | | | 120000 | 1440000 |
| 3 | Հակոբյան Լիլիթ | հաշվապահ | | | | 0,5 | 57500 | | | | | | | | | 57500 | 690000 |
| 4 | Միքայելյան Կարինե | գրադարանավար | | | | 1 | 105000 | | | | | | | | | 105000 | 1260000 |
| 5 | Հարությունյան Մարգալիտ | պահակ | | | | 1 | 100000 | | | | | | | | | 100000 | 1200000 |
| 6 | Մաթևոսյան Հրայր | օժանդակ բանվոր | | | | 0,5 | 50000 | | | | | | | | | 50000 | 600000 |
| 7 | Ղազարյան Սմելա | հավաքարար | | | | 1 | 100000 | | | | | | | | | 100000 | 1200000 |
| 8 | Հակոբյան Նելին | հավաքարար | | | | 0,5 | 50000 | | | | | | | | | 50000 | 600000 |
| 9 | Վարդանյան Լիանա | հավաքարար | | | | 0,5 | 50000 | | | | | | | | | 50000 | 600000 |
| | | | | | | | | | | | | | | | | 1795000 | 21540000 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 985**

*29 նոյեմբեր 2023թ.*

ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՄՐԱԿԱՅՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 10-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ, հիմք ընդունելով <<ԷԴԻՖԱՅՍ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի դիմումը, Ծաղկաձոր համայնքի ղեկավարի կողմից 2022 թվականի մարտի 22-ին տրված համար 08 նախագծման թույլտվությունը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը չի հանգեցնում հողամասի նպատակային նշանակության փոփոխության, հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը չի հանգեցնում գլխավոր հատակագծի հիմնական լուծումների փոփոխության, չի փոփոխվում գլխավոր հատակագծով սահմանված կառուցապատման հերթականությունը, հողամասը չի առնչվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերին,չի գտնվում օրեսնդրությամբ սահմանված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքում, նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դասակարգմամբ բարձր և բարձրագույն ռիսկայնության օբյեկտների կառուցման համար, նախատեսված չէ պետական բյուջեի(այդ թվում՝ պետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային) միջոցների հաշվին կամ դրանց ներգրավմամբ օբյեկտների կառուցման համար՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.<<ԷԴԻՖԱՅՍ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական N28122021-07-0107, կադաստրային ծածկագիր 07-005-0003-0005), համայնք Ծաղկաձոր ք. Օրբելու փողոց, թիվ 1/1 հասցեում գտնվող 0,134238 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերից փոփոխել բնակավայրերի բնակելի կառուցապատման:

2. Հողամասի վրա ամրակայված 63,96 քառ.մետր ընդհանուր մակերեսով շինությունների գործառնական նշանակությունը պատկերել որպես բնակելի նշանակության շինություններ :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 986

*29 նոյեմբեր 2023թ.*

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ԵՎ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՄԵՂՐԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N02-Ն հրամանով հաստատված հավելվածի պահանջներով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել Ծաղկաձոր համայնքի «Ծաղկաձոր քաղաքի մանկական արվեստի դպրոց» և Ծաղկաձոր համայնքի «Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար 2023 թվականի նոյեմբերի 30-ին՝ ժամը 11:00-ին հայտարարված մրցույթի մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելված 1,2:
2. Հանձնաժողովի քարտուղար նշանակել Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական, քարտուղարության, անձնակազմի կառավարման բաժնի պետ Ռիմա Մանուկյանին :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 987

*30 նոյեմբեր 2023թ.*

## ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N205-Ն որոշման հավելված 2-ը՝

# ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Աշոտ Սահակի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 17112023-07-0145) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, ԳՄՀ թաղամաս, 90/1 հասցեում գտնվող 0,1447 հա մակերեսով հողամասի և (սեփականության վկայական N 11052023-07-0194) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,Գլխավոր մարզահամալիր թաղամաս, 92 հասցեում գտնվող 0,01 հա մակերեսով հողամասի միավորման հետևանքով առաջացած 0,1547 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Գլխավոր մարզահամալիր թաղամաս, 92 հողամաս ։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 988

*30 նոյեմբեր 2023թ.*

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Համլետ Ասատուրի Սահակյանի դիմումը՝

# ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Համլետ Ասատուրի Սահակյանին տրամադրել համայնք Ծաղկաձոր, Վլադիմիր Հարությունյան փողոց 15 հասցեում հանգստի տնակների կառուցման շինարարության թույլտվություն:
2. Համայնքապետարանի քաղաքաշինության համապատասխան մասնագետին ապահովել աշխատանքների սկսման համար, գործող կարգին համապատասխան անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը և պատշաճ հսկողության իրականացումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 989

*30 նոյեմբեր 2023թ.*

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի 1023-Ն որոշմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 20233MT6K2 և հիմք ընդունելով Ստեփան Գարիկի Մկրտչյանի դիմումը՝

# ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Ծաղկաձոր համայնք, գ. Արտավազ , 1-ին փողոց թիվ 11 հասցեում գտնվող, Ստեփան Գարիկի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփ․ վկայականի համար՝ 14032019-07-0037) 0,233 հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 338,24 քառ.մ ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի շինությունները:
2. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 30 օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Շինությունների օրինականացման համար սահմանել վճար՝ 480 978 (չորս հարյուր ութանասուն հազար ինը հարյուր յոթանասունութ ) Հայաստանի Հանրապետության դրամ, որը անհրաժեշտ է վճարել 900125004250 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 990

*01 դեկտեմբեր 2023թ.*

### ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N205-Ն որոշման հավելված 2-ը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետությունը պատկանող 0,65168 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Մեղրաձոր, 1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 991

*01 դեկտեմբեր 2023թ.*

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի 1023-Ն որոշմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023GLBAH3 և հիմք ընդունելով Դավիթ Անդրանիկի Մանուկյանի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Ծաղկաձոր համայնք, գ Աղավնաձոր , Ղշով աղբյուր թաղամաս թիվ 4 հասցեում գտնվող, Դավիթ Անդրանիկի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփ. վկայականի համար՝ 23052022-07-0074) 3,52 հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 1557,51 քառ.մ ընդհանուր արտաքին մակերեսով հասարակական շինությունները և թվով երկու ինքնակամ բացված դռները:
2. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 30 օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Շինությունների օրինականացման համար սահմանել վճար՝ 4 439 559 (չորս միլիոն չորս հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր հիսունինը ) Հայաստանի Հանրապետության դրամ, որը անհրաժեշտ է վճարել 900125000019 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 992

*04 դեկտեմբեր 2023թ.*

## ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N205-Ն որոշման հավելված 2-ը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

<<ՄԵԾՆ ԷՐԻԿ>>ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 22112023-07-0134) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Սարալանջի, 20/1 հասցեում գտնվող 0,2502 հա մակերեսով հողամասի և (սեփականության վկայական N 12102023-07-0170) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,Սարալանջի փողոց, 4-րդ փակուղի, 20/2 հասցեում գտնվող 0,1798 հա մակերեսով հողամասի միավորման հետևանքով առաջացած 0,43 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,Սարալանջի փողոց, 4-րդ փակուղի, 20/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 993

*04 դեկտեմբեր 2023թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և <<Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին>> օրենքով՝

# ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, գյուղ Մեղրաձոր 3-րդ փողոցի 16-րդ փակուղի 8 հասցեում գտնվող,արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբեկտների համար նախատեսված, 0,15 հա մակերեսով, 07-045-0064-0003 կադաստրային ծածկագրով հողամասի, քաղաքացի՝ Նորիկ Աղվանի Գալստյանի հետ կնքված հողամասի վարձակալության պայմանագրի վարձատու կողմ հանդիսանում է Ծաղկաձորի համայնքապետարանը, որպես Մեղրաձոր գյուղական համայնքի իրավահաջորդ / Հողամասի վարձակալության պայմանագիր, կնքված 2006 թվականի օգոստոսի 09-ին, Հրազդան նոտարական տարածքի նոտար՝ Ալբերտ Հովհաննիսյանի կողմից, գրանցված գրանցամատյանում թիվ 3712 /:

2. Վերոնշյալ պայմանագրում կատարել կողմի անվան փոփոխության գործընթաց:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 994

*04 դեկտեմբեր 2023թ.*

## ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով,Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Արուսյակ Հրանտի Մարգարյանի դիմումը՝

# ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Արուսյակ Հրանտի Մարգարյանին օտարել Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, ք . Ծաղկաձոր ,Նոր թաղամասի 1-ին փողոց թիվ 17/1 հասցեում գտնվող,(վկայական համար 21112023-07-0190, կադաստրային ծածկագիր 07-005-0015-0037) Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին չդասվող, բնակավայրերի այլ հողերի համար նախատեսված 0,025 հա մակերեսով հողամասը՝ 2 628 450 (երկու միլիոն վեց հարյուր քսանութ հազար չորս հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամով որը անհրաժեշտ է վճարել 900125002122 հաշվեհամարին և իր կողմից կառուցված 5,62 ք.մ արտաքին մակերեսով պարիսպը `45 944 (քառասուն հինգ հազար ինը հարյուր քառասունչորս) Հայաստանի Հանրապետության դրամով որը անհրաժեշտ է վճարել 900125002478 հաշվեհամարին:

2.Ծաղկաձորի համայնքապետարանի կողմից Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Ծաղկաձոր ք, Նոր թաղամասի 1-ին փողոց թիվ 17/1 հասցեում գտնվող հողամասի պետական գրանցում և միասնական տեղեկանք ստանալու համար կատարված վճարումները՝ որոնք կազմել են 36 000 (երեսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, անհրաժեշտ է որպես փոխհատուցում վճարել 900125002262 հաշվեհամարին:

3 . Արուսյակ Հրանտի Մարգարյանի հետ կնքել շինության և հողամասի օտարման պայմանագիր:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 995

*04 դեկտեմբեր 2023թ.*

## ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով,Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Արուսյակ Հրանտի Մարգարյանի դիմումը՝

# ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Արուսյակ Հրանտի Մարգարյանին օտարել Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, ք. Ծաղկաձոր ,Կ. Անդրեասի փողոց թիվ 15/1 հասցեում գտնվող,(վկայական համար 21112023-07-0055, կադաստրային ծածկագիր 07-005-0026-0938) Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին չդասվող, հատուկ պահպանվող տարածքների հանգստի համար նախատեսված 0,00402 հա մակերեսով հողամասը՝ 650 300 (վեց հարյուր հիսուն հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամով որը անհրաժեշտ է վճարել 900125002122 հաշվեհամարին և իր կողմից կառուցված 31,52 ք.մ արտաքին մակերեսով շինությունները ՝909 478 (ինը հարյուր ինը հազար չորս հարյուր յոթանասունութ) Հայաստանի Հանրապետության դրամով որը անհրաժեշտ է վճարել 900125002478 հաշվեհամարին:

2.Ծաղկաձորի համայնքապետարանի կողմից Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Ծաղկաձոր ք, Կ. Անդրեասի փողոց թիվ 15/1 հասցեում գտնվող հողամասի պետական գրանցում և միասնական տեղեկանք ստանալու համար կատարված վճարումները՝ որոնք կազմել են 36 000 (երեսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, անհրաժեշտ է որպես փոխհատուցում վճարել 900125002262 հաշվեհամարին:

3. Արուսյակ Հրանտի Մարգարյանի հետ կնքել շինության և հողամասի օտարման պայմանագիր:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ · RA KOTAYK REGION TSAGHKADZOR MUNICIPALITY · 03027029

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 996

*05 դեկտեմբեր 2023թ.*

## ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N205-Ն որոշման հավելված 2-ը՝

# ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

<<ՍԱՏՈՒՐՆԱՎԱՆ>>ՍՊԸ -ին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 24102023-07-0169) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց, 73 հասցեում գտնվող 3,759125 հա մակերեսով հողամասի, ըստ անշարժ գույքի /հողամասի/ առուվաճառքի պայմանագրի պատկանող (անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր՝ տրված 2023 թվականի նոյեմբերի 28-ին,ՀՀ Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտար՝ Գուրգեն Էդուարդի Գյուլնազարյանի կողմից ,գրանցված է գրանցամատյանում N 4647) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց, 73/9 հասցեում գտնվող 0,01 հա մակերեսով հողամասի և ըստ անշարժ գույքի /հողամասի/ առուվաճառքի պայմանագրի պատկանող (անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր՝ տրված 2023 թվականի նոյեմբերի 28-ին,ՀՀ Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտար՝ Գուրգեն Էդուարդի Գյուլնազարյանի կողմից ,գրանցված է գրանցամատյանում N 4648) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց, 73/10 հասցեում գտնվող 0,16 հա մակերեսով հողամասերի միավորման հետևանքով առաջացած 3,929125 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,Պահլավունյաց փողոց, 73 հողամաս:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 997

*05 դեկտեմբեր 2023թ.*

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածով, հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով , <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածով , <<Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին>> օրենքով և հիմք ընդունելով Շողիկ Ժորժիկի Արզումանյանի դիմումը `

# ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Շողիկ Ժորժիկի Արզումանյանի կառուցապատման իրավունքը մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, գյուղ Մեղրաձոր 3-րդ փողոց 68/2 հարակից տարածք թիվ 2 հասցեում գտնվող (վկայական 2637696) 0,0020 հա մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Լուծել Մեղրաձորի գյուղական համայնքի և Շողիկ Ժորժիկի Արզումանյանի միջև <<համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին>> պայմանագիրը:

3.ՈՒժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր գյուղական համայնքի ղեկավարի 2011 թվականի փետրվարի 07-ի <<Շողիկ Ժորժիկի Արզումանյանին կառուցապատման իրավունքով հողատարածք հատկացնելու մասին>> թիվ 5 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 998

*06 դեկտեմբեր 2023թ.*

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 221-Ն և համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 13-ի թիվ 04 որոշումները և Ծաղկաձոր համայնքի բնակիչ Ալվարդ Խաչատուրի Խաչատրյանի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնք, գյուղ Մեղրաձոր 3-րդ փողոց 10 նրբանցք 4 հասցեի բնակիչ Ալվարդ Խաչատրյանին տրամադրել դրամական օգնություն 40 000 (քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 999

*06 դեկտեմբեր 2023թ.*

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 221-Ն և համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 13-ի թիվ 04 որոշումները և Ծաղկաձոր համայնքի բնակիչ Ելենա Գուրգենի Սարգսյանի դիմումը՝

# ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնք, գյուղ Աղավնաձոր 2-րդ փողոց 4 փակուղի 3 հասցեի բնակիչ Ելենա Սարգսյանին տրամադրել դրամական օգնություն 50 000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ** 1000

*06 դեկտեմբեր 2023թ.*

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ և հիմք ընդունելով <<ՊԱԼԼԱԴԱ ԾԱՂԿԱՁՈՐ>> ՍՊԸ-ի տնօրենի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. <<ՊԱԼԼԱԴԱ ԾԱՂԿԱՁՈՐ>> ՍՊԸ-ին տրամադրել համայնք Ծաղկաձոր, Ծաղկաունյաց հրապարակ թիվ 5 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասնաշենքերի կառուցման շինարարության թույլտվություն:
2. Համայնքապետարանի քաղաքաշինության, հողաշինության, բնապահպանության և գյուղատնտեսության բաժնին ապահովել աշխատանքների սկսման համար, գործող կարգին համապատասխան անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը և պատշաճ հսկողության իրականացումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**